ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 22.01/53
22.01.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

Դիմում-բողոք

(ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 26.12.2014թ. որոշումը վերացնելու պահանջի մասին)

1.Գործի փաստական հանգամանքները.

2014 օգոստոսի 02-ին իր իրավունքների պաշտպանության համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ 40/38 հասցեի բնակչուհի Փնջիկ Հովհաննեսի Թերոյանը: Կազմակերպությանն ուղղված դիմումում քաղաքացին հայտնել է, որ 2012 ապրիլի 4-ին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն: Հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքում քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Քաղաքացին կազմակերպությանն ուղղված դիմումում հայտնել է, որ նախաքննության ընթացքում քննությունն իրականացնող քննիչների կողմից կատարվել են մի շարք խախտումներ: Մասնավորապես, քաղաքացին հայտնել է, որ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Մ. Հարությունյանի և նույն բաժանմունքի ավագ քննիչ Սասուն Մխիթարյանի՝ քաղաքացու հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում կատարված մի շարք զննություններ կատարվել են առանց ընթերակաների ներգրավման:

2014 թվականի օգոստոսի 27-ին կազմակերպությունը դեպքի վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Վ.Շահինյանին, պահանջելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն հաղորդմամբ

ներկայացված հանցագործությունը (հանցագործությունները) բացահայտելու և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

2014 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանը, քննարկելով ներկայացված հաղորդումը, կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որը կազմակերպությունում ստացվել է 2014 թվականի սեպտեմբերի 20-ին:

2014 թվականի սեպտեմբերի 27-ին կազմակերպության կողմից դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 16.09.2014 թ. որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

2014 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ գլխավոր դատախազը պատասխան գրությամբ հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված բողոքը բավարարվել է և հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 314 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2014 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանը կայացրել է քրեական հետապնդում չիրականացնելուն և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը, որը կազմակերպության կողմից ստացվել է 2015 թվականի հունվարի 16-ին:

2. Վարույթն իրականացնող մարմնի ոչ պատշաճ քննության վերաբերյալ պնդումներ.

Քննարկելով կազմակերպության կողմից քաղաքացի Փնջիկ Թերոյանի դիմումի հիման վրա ներկայացված հանցագործության հաղորդումը, գործի հարուցումը մերժելու մասին ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանի որոշումը, այնուհետև Կազմակերպության կողմից ներկայացված բողոքը ՀՀ գլխավոր դատախազություն և ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանի 26.12.2014թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը կայացնելով վարույթն իրականացնող մարմինը ցուցաբերել է անգործություն՝ մի շարք կարևոր հանգամանքների շուրջ քննություն չիրականացնելով և դրանք փաստող կամ հերքող ապացույցներ ձեռք չբերելով, իսկ ձեռք բերված ապացույցների մեծ մասին տրվել է միակողմանի գնահատական՝ քողարկելով ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումները և անօրինական գործողությունները:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի ուժով քրեական հետապնդում իրականացնող մարմինը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար կրում է օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, **օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները**

ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար»:

Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանի ինչպես 16.09.2014թ. քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման և այնպես 26.12.2014թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումները ընդհանուր առմամբ բառացի մեկը մյուսի կրկնությունն են, և ՀՀ գլխավոր դատախազի կողմից բողոքը բավարարվելուց հետո վարույթն իրականացնող մարմինը կրկին նույն պատճառաբանություններով, հիմնավորելով նույն փաստերի և առավելապես քննիչների ցուցմունքների հիման վրա կայացրել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում:

2.1 Այսպես, կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման մեջ նշվում է, որ 2012 թվականի ապրիլի 27-ին Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Ս. Մխիթարյանը զննել է Փնջիկ Թերոյանին պատկանող և նրա կողմից ներկայացված բջջային հեռախոսահամարի վերծանումները: Ըստ քննիչի կողմից կազմված արձանագրության՝ տվյալ քննչական գործողությանը որպես ընթերականեր ներկա են եղել Սուսաննա Գևորգի Հարությունյանը և Վալենտինա Արշալույսի Քալաշյանը:

2012 թվականի մայիսի 15-ին նույն քննիչի կողմից կատարվել է լազերային սկավառակների զննություն, որտեղ որպես ընթերականեր են ներգրավվել Սուսաննա Գևորգի Հարությունյանը և Արամ Ռաֆայելի Այվազյանը:

16.09.2014թ. քրեական գործը հարուցելը մերժելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը նշում է՝ «ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նյութերի նախապատրաստման ընթացքում Սուսաննա Հարությունյանը, Վալենտինա Քալաշյանը և Արամ Ռաֆայելի Այվազյանը բացատրություններ են տվել, որ բոլոր նշված դեպքերում ներկա են եղել հիշատակված գործողություններին և իրենց ստորագրություններով հավաստել են դրանց ընթացքն ու արդյունքները: Արամ Այվազյանը նաև նշել է, որ քաղաքացի Փնջիկ Թերոյանին չի ճանաչում և նրա հետ տվյալ հարցով զրույց չի ունեցել:

Ինչ վերաբերում է Սուսաննա Հարությունյանի և Վալենտինա Քալաշյանին, ապա պարզվել է, որ նրանք չեն հանդիսանում ոստիկանության ծառայողներ, *ոստիկանությունում աշխատում են, որպես հավաքարար*, գործով շահագրգռված չեն եղել, քննիչից որևէ կախման մեջ չեն գտնվել, հետևաբար՝ որևէ արգելք չի եղել նրանց՝ որպես ընթերակա ներգրավելու համար»:

Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանը իր 26.12.2014թ. որոշման մեջ նշում է, որ՝ «Սուսաննա Հարությունյանը, Վալենտինա Քալաշյանը և Արամ Այվազյանը ցուցմունքներ են տվել, որ բոլոր նշված դեպքերում ներկա են եղել հիշատակված քննչական գործողութուններին և իրենց ստորագրություններով հավաստել են դրանց ընթացքն ու արդյունքները: Արամ Այվազյանը նաև նշել է, որ քաղաքացի Փնջիկ Թերոյանին չի ճանաչում և նրա հետ տվյալ հարցով զրույց չի ունեցել: Իրեն այդ հարցով դիմել են երկու փաստաբաններ, որոնց հարցերին հրաժարվել է պատասխանել:

Ինչ վերաբերում է Սուսաննա Հարությունյանի և Վալենտինա Քալաշյանին, ապա պարզվել է, որ նրանք չեն հանդիսանում ոստիկանության ծառայողներ, ոստիկանությունում աշխատում են որպես հավաքարարներ, գործով շահագրգռված չեն եղել, քննիչից որևէ կախման մեջ չեն գտնվում, հետևաբար՝ որևէ արգելք չի եղել նրանց որպես ընթերակա ներգրավվելու համար:

Փնջիկ Թերոյանը այդ կապակցությամբ ցուցմունք է տվել, որ ինքը Արամ Այվազյանին չի հանդիպել, նրա հետ խոսել են փաստաբաններ Աշոտ Արամյանը և Անդրանիկ Բարսեղյանը: Ս. Հարությունյանի և Վ. Քալաշյանի ցուցմունքներում նշված ըստ էության հակասող որևէ տվյալ չի հայտնվել (...):

Վարույթն իրականացնող մարմինը ինչպես քրեական գործի հարուցման մերժման, այնուհետև քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթի կարճման վերաբերյալ որոշումներ կայացնելիս ձեռք բերված ապացույցները գնահատել է միակողմանի և անհրաժեշտ քննչական գործողություններ չի իրականացրել հանցագործության հաղորդման մեջ նշված տեղեկությունների իսկությունը պարզելու համար:

Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմինն անտեսել է այն հանգամանքը, որ ընթերակաները հանդիսացել են ոստիկանության աշխատակիցներ, ինչպես նաև հաշվի չի առել վերջիններիս՝ նույն քննիչի կողմից քննչական գործողություններում՝ որպես ընթերակա ներգրավվելու **<u>պարբերականությունը,</u>** որը անվիճելի փաստ է և տվյալ դեպքում անթույլատրելի է:

Գործի նյութերի նախապատրաստման ընթացքում, այնուհետև նախաքննության իրականացման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը ղեկավարվել է միայն մի կողմի բացատրություններով, չի իրականացրել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

2.2 ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Մ. Հարությունյանի կողմից 22.11.2012թ. լազերային սկավառակի ձայնագրառման զննության կատարման ժամանակ ներգրավված չեն եղել ընթերականեր և զննություն կատարելու արձանագրության մեջ նշված անձինք՝ Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյանը, երբևէ Վանաձոր քաղաքի բնակչության ռեգիստրում չի եղել և ՀՀ քաղաքացու անձնագիր չի ստացել, իսկ Բորիս Հերմանի Կոբալյան քննիչի կողմից արձանագրությունում նշված հասցեում երբևէ չի հաշվառվել և հաշվառումից չի հանվել:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ նշվել է՝

«Թիվ 62207512 քրեական գործի նախաքննության ընթացքում, 2012 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի քննիչ Մհեր Հարությունյանը զննության է ենթարկել Փնջիկ Թերոյանի կողմից քննությանը ներկայացրած լազերային սկավառակը, որի վերաբերյալ կազմել է արձանագրություն: Համաձայն այդ արձանագրության՝ սկավառակի զննությանը որպես ընթերակա են ներգրավվել և *ներկա են գտնվել* Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյանը՝ ծնված

1961թ., բնակվող՝ ք. Վանաձոր Շիրակացու 4/45 հասցեում և Բորիս Հերմանի Կոբալյանը՝ ծնված 1955թ., բնակվող՝ ք. Վանաձոր, Կնունյանց 49 ա հասցեում: Պարզվել է, որ Վանաձոր քաղաքի Շիրակացու 45-րդ շենքն իրենից ներկայացնում է հանրակացարան, հիշյալ շենքում 65-րդ համարի սենյակ չկա, իսկ կատարված հարցումներով «Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյան» անուն-հայրանուն-ազգանվամբ անձնավորության՝ տվյալ հանրակացարանում բնակվելու վերաբերյալ տեղեկություններ ձեռք չեն բերվել: Վանաձոր քաղաքի Կնունյանց 49ա հասցեում գտնվող առանձնատունը պատկանում է նույն հասցեում հաշվառված Օնիկ Մկրտչի Լուսարարյանին, ծնվ. 22.05.1956թ., ով Բորիս Հերմանի Կոբալյան անուն, ազգանուն, հայրանունով անձնավորության չի ճանաչում:

Քննիչ Մհեր Հարությունյանը ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություն է տվել, որ լազերային սկավառակի զննությունից առաջ, դրա ընթացքում որպես ընթերակա ներգրավելու համար ոստիկանության շենքի իր աշխատասենյակ է հրավիրել երկու անծանոթ անձանց: Քանի որ այդ անձինք իրենց մոտ տվյալ պահին անձնագրեր չեն ունեցել, արձանագրությունում տվյալները լրացնելիս հիմք է ընդունել նրանց բանավոր հաղորդած տեղեկությունները և չի բացառում, որ այդ անձինք իրենց մասին ճիշտ տվյալներ չեն հայտնել, քանի որ դժկամությամբ են համաձայնվել մասնակցել որպես ընթերակա:

Նյութերի նախապատրաստման ընթացքում հանձնարարություն է տրվել ոստիկանության՝ օպերատիվ ճանապարհով պարզելու, թե իրականում քննիչի կողմից տվյալ զննությունը կատարելու ժամանակ ընթերականեր ներգրավվել են, թե ոչ և ովքեր են եղել այդ անձինք:

Համաձայն՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի և Բազումի բաժինների պետերի գրությունների՝ ձեռնարկված միջոցառումներով չի հաջողվել պարզել որպես ընթերակա ներգրավված անձանց ինքնությունը»:

2014 թվականի դեկտեմբերի 26-ին նույն քննիչի կողմի կայացված քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում դրված են նույն փաստերն և հանգամանքները, որոնք հիմք էին ծառայել քննիչի կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելիս:

ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ ՀՀ գլխավոր դատախազությունը բավարարելով Կազմակերպության կողմից ներկայացված բողոքը և քրեական գործ հարուցելով՝ հաղորդմամբ ներկայացված փաստերում հանցակազմ պարունակով տարրեր հայտնաբերելով գործն ուղարկել է նոր քննության: Բացի այդ, եթե հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված փաստերը, որոնք հիմք էին հանդիսացել վերջինիս կողմից քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացման համար, բավարար լինեին, ապա ՀՀ գլխավոր դատախազությունը չէր բավարարի ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա.Մինասյանի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 16.09.2014 թ. որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելուն պարտավորեցնելու պահանջների վերաբերյալ բողոքը: Նույն փաստական հանգամանքները

դրվել են նաև քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման հիմքում:

Վարույթն իրականացնող մարմինը, որևէ միջոց չի ձեռնարկել պարզելու, թե արդյոք քննչական գործողությունների իրականացման ընթացքում ընթերականեր ներգրավված եղել են, թե՝ոչ: Տվյալ դեպքում ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանը առաջնորդվել է միայն ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի քննիչ Սասուն Մխիթարյանի բացատրություններով, որոնք չեն կարող օբյեկտիվ լինել օբեկտիվ պատճառով:

Այսպիսով, վերոգրյալն ապացուցում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը կայացվել է գործի ոչ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում, որը թույլ չի տվել արդարացի իրավական գնահատական տալ ոստիկանության աշխատակիցների գործողություններին:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի դրույթներով՝

Խնդրում եմ

վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 26.12.2014 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

Կից ներկայացվում է 26.12.2014թ. ՀՀ ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչ Ա. Կ. Մինասյանի՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման պատճեն:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ս. Սողոմոնյան
ssoghomonyan@hcav.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02

№ 18-ԳԱՀ/16

«26» 12 2017 թ.

«Հելսինկյան քաղաքացիական դիտորդների
Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ
Արթուր Սաքունցին
(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, 59)

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածով սահմանված կարգով Ձեզ եմ ուղարկում թիվ 62226614 քրեական գործով Միհր Հարությունյանի, Սասուն Մխիթարյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը:

Պարզաբանում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Դատախազը բողոքն ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենը անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

Առդիր՝ որոշման պատճենը 4 թերթից:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ՝ *Ա. Մինասյան*

ՈՐՈՇՈՒՄ

քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին

26 դեկտեմբերի, 2014թ. քաղ. Երևան

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության գնդապետ Ա.Կ. Մինասյանս, վերանայելով վարույթիս տակ գտնվող թիվ 62226614 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ նախագահ Արթուր Սաքունցը դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, հայտնելով, որ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորիչ 40/38 հասցեի բնակչուհի Փնջիկ Թերոյանից տեղեկություններ են ստացել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքում քննված քրեական գործով քննիչների կողմից կատարված մի շարք խախտումների մասին: Այսպես, լազերային սկավառակ զննելու մասին քննիչ Մ. Հարությունյանի կազմած, 2012 թվականի նոյեմբերի 22-ի արձանագրության մեջ որպես ընթերականեր հիշատակված անձանցից մեկը՝ Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյանը, երբևէ Վանաձոր քաղաքի բնակչության ռեգիստրում հաշվառված չի եղել և ՀՀ քաղաքացու անձնագիր չի ստացել, իսկ մյուսը՝ Բորիս Հերմանի Կոբալյանը, արձանագրությունում նշված հասցեում երբևէ չի հաշվառվել և հաշվառումից չի հանվել:

Նույն բաժանմունքի քննիչ Ս. Մխիթարյանի կողմից ձայնասկավառակների զննության վերաբերյալ կազմված, 2012 թվականի մայիսի 15-ի արձանագրության համաձայն՝ տվյալ քննչական գործողության ժամանակ որպես ընթերականեր են ներգրավվել Արամ Ռաֆայելի Այվազյանը և Սուսաննա Գևորգի Հարությունյանը: Սակայն, ըստ քաղաքացի Փնջիկ Թերոյանի՝ Արամ Ռաֆայելի Այվազյանը տեղյակ չի եղել, որ ներգրավված է որպես ընթերակա ու այդ մասին իրենից է իմացել, իսկ նույն քննիչի կազմած, 2012 թվականի ապրիլի 27-ի և 2012 թվականի մայիսի 7-ի արձանագրություններում որպես ընթերակա նշված Վալենտինա Արշալույսի Քալաշյանը աշխատում է ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնում, հետևաբար՝ չէր կարող հանդես գալ որպես ընթերակա:

Ա. Սաքունցի վերը նշված դիմումի հիման վրա ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստվել են նյութեր: 2014 թվականի սեպտեմբերի 16-ին նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դրանց նախապատրաստման ընթացքում որևէ տեղեկություններ ձեռք չեն բերվել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Սասուն Մխիթարյանի և նույն բաժանմունքի քննիչ Մհեր Հարությունյանի կողմից առերևույթ հանցագործություն՝ պաշտենեական կեղծիք կամ այլ քրեորեն հետապնդելի արարք կատարելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի 2014 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ վերացվել է Արթուր Սաքունցի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի քննիչների վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2014 թվականի սեպտեմբերի 16-ի որոշումը, պաշտոնեական կեղծիքի դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար 2014 թվականի հոկտեմբերի 22-ին ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նախաքննության ընթացքում պարզվել է հետևյալը.

2012 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական վարչությունում նյութեր են նախապատրաստվել Փնջիկ Թերոյանի հաղորդման հիման վրա՝ իրենից խաբեությամբ գումար հափշտակելու վերաբերյալ: Նյութերը նախապատրաստել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ, ոստիկանության մայոր Սասուն Մխիթարյանը: Հետագայում դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 62207512 քրեական գործի

նախաքննությունը կատարել է նույն բաժանմունքի քննիչ Մհեր Հարությունյանը, ով 2013 թվականի հունվարի 21-ին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու և դեպքին առնչվող Արեն Աղաջանյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով:

Դեռևս նյութերի նախապատրաստման ժամանակ, 2012 թվականի ապրիլի 27-ին Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Ս. Մխիթարյանը զննել է Փնջիկ Թերոյանին պատկանող և նրա կողմից ներկայացրած բջջային հեռախոսահամարից կատարված զանգերի վերծանումները: Ըստ արձանագրության՝ տվյալ քննչական գործողությանը ներկա են եղել որպես ընթերականեր հրավիրված Սուսաննա Գևորգի Հարությունյանը և Վալենտինա Արշալույսի Քալաշյանը, ովքեր իրենց ստորագրություններով հաստատել են քննչական գործողության ընթացքն ու արդյունքները և այդ կապակցությամբ հայտարարություններ և դիտողություններ չեն ներկայացրել: Նույն ընթերականերն են ներգրաված եղել նաև 2012 թվականի մայիսի 7-ին Լիլիթ Նահապետյանի կողմից քննիչին լազերային սկավառակ ներկայացնելու ժամանակ, որի առթիվ նույնպես կազմվել է համապատասխան արձանագրություն: 2012 թվականի մայիսի 15-ին նույն քննիչի կողմից կատարվել է լազերային սկավառակների զննություն: Այս անգամ էլ որպես ընթերականեր են ներգրավվել Սուսաննա Գևորգի Հարությունյանը և Արամ Ռաֆայելի Այվազյանը:

Սուսաննա Գևորգի Հարությունյանը, Վալենտինա Արշալույսի Քալաշյանը և Արամ Ռաֆայելի Այվազյանը ցուցմունքներ են տվել, որ բոլոր նշված դեպքերում ներկա են եղել հիշատակված գործողություններին և իրենց ստորագրություններով հավաստել են դրանց ընթացքն ու արդյունքները: Արամ Այվազյանը նաև նշել է, որ քաղաքացի Փնջիկ Թերոյանին չի ճանաչում և նրա հետ տվյալ հարցով զրույց չի ունեցել: Իրեն այդ հարցով դիմել են երկու փաստաբաններ, որոնց հարցերին հրաժարվել պատասխանել:

Ինչ վերաբերում է Սուսաննա Գևորգի Հարությունյանին և Վալենտինա Արշալույսի Քալաշյանին, ապա պարզվել է, որ նրանք չեն հանդիսանում ոստիկանության ծառայողներ, ոստիկանությունում աշխատում են որպես հավաքարար, գործով շահագրգռված չեն եղել, քննիչից որևէ կախման մեջ չեն գտնվել, հետևաբար՝ որևէ արգելք չի եղել նրանց որպես ընթերակա ներգրավելու համար: Վերը նշվածը հիմնավորվել է ինչպես Սուսաննա Հարությունյանի և Վալենտինա Քալաշյանի, այնպես էլ Սասուն Մխիթարյանի ցուցմունքներով:

Փնջիկ Թերոյանը այդ կապակցությամբ ցուցմունք է տվել, որ Արամ Այվազյանին չի հանդիպել, նրա հետ խոսել են փաստաբաններ Աշոտ Արամյանը և Անդրանիկ Բարսեղյանը: Սուսաննա Հարությունյանի և Վալենտինա Քալաշյանի ցուցմունքներում նշված տվյալներին ըստ էության հակասող որևէ տվյալ չի հայտնել:

Փաստաբաններ Աշոտ Արամյանը և Անդրանիկ Բարսեղյանը ցուցմունք են տվել, որ Փնջիկ Թերոյանի գործում եղած փաստաթղթերում հնարավոր կեղծիքներ կատարվելու հանգամանքը պարզելու համար զրուցել են այդ գործով որպես ընթերակա ներգրավված Արամ Այվազյանի հետ, սակայն վերջինս հրաժարվել է իրենց որևէ բացատրություն տալ:

Թիվ 62207512 քրեական գործի նախաքննության ընթացքում, 2012 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի քննիչ, ոստիկանության կապիտան Մհեր Հարությունյանը զննության է ենթարկել Փնջիկ Թերոյանի կողմից քննությանը ներկայացրած լազերային սկավառակը, որի վերաբերյալ կազմել է համապատասխան արձանագրություն: Համաձայն այդ արձանագրության՝ սկավառակի զննությանը որպես ընթերակա են ներգրավվել և ներկա են գտնվել Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյանը, ծնվ. 1961թ., բնակվող ք. Վանաձոր, Շիրակավցու 4/45, և Բորիս Հերմանի Կոբալյանը, ծնվ. 1955թ., բնակվող ք. Վանաձոր, Կնունյանց 49ա: Պարզվել է, որ Վանաձոր քաղաքի Շիրակացու փողոցի 45-րդ շենքն իրենից ներկայացնում է հանրակացարան, հիշյալ շենքում 65-րդ համարի սենյակ չկա, իսկ կատարված հարցումներով «Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյան» անուն-հայրանուն-ազգանվամբ անձնավորության տվյալ հանրակացարանում բնակվելու վերաբերյալ տեղեկություններ ձեռք չեն բերվել: Վանաձոր քաղաքի Կնունյանց 49ա հասցեում գտնվող առանձնատունը պատկանում է նույն հասցեում հաշվառված Օնիկ Մկրտչի Լուսարարյանին,

ծնվ. 22.05.1956թ., ով Բորիս Հերմանի Կոբալյան անուն-հայրանուն-ազգանվամբ անձնավորության չի ճանաչում:

Քննիչ Մեր Հարությունյանը ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ցուցմունք է տվել, որ լազերային սկավառակի զննությունից առաջ, դրա ընթացքում որպես ընթերակա ներգրավելու համար ոստիկանության շենքի իր աշխատասենյակ է հրավիրել երկու անծանոթ անձանց: Քանի որ այդ անձինք իրենց մոտ տվյալ պահին անձնագրեր չեն ունեցել, արձանագրությունում տվյալները լրացնելիս հիմք է ընդունել նրանց բանավոր հաղորդած տեղեկությունները և չի բացառում, որ այդ անձինք իրենց մասին ճիշտ տվյալներ չեն հայտնել, քանի որ դժկամությամբ են համաձայնել մասնակցել որպես ընթերակա:

Քննիչ Մեր Հարությունյանի կազմած արձանագրության վերաբերյալ Փնջիկ Թերոյանը ցուցմունք է տվել, թե քննիչը քաջատեղյակ է, որ Վանաձոր քաղաքի Կնունյանց 49 ա տանը «Բորիս Հերմանի Կոբալյան» տվյալներով անձ չէր կարող բնակվել, քանի որ նրա կնոջ քրոջ ամուսինը նախկինում այդ տան հետ կապված դատական վեճ է ունեցել:

Մեր Հարությունյանն իր ցուցմունքում պարզաբանել է, որ տեղյակ է իր բաջանաղի՝ Վահագն Կապլանյանի կողմից աճուրդով Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոցում տուն ձեռք բերելու մասին, սակայն այդ տան հասցեն իրեն հայտնի չի եղել, հետևաբար չէր կարող ենթադրել, որ իր կողմից որպես ընթերակա ներգրավված տղամարդը հենց այդ տան հասցեն է նշել:

Վահագն Կապլանյանն էլ ցուցմունք է տվել, որ իր բաջանաղը՝ Մեր Հարությունյանը, այդ տան հասցեն չէր կարող իմանալ, քանի որ այնտեղ չի եղել, իսկ տան հետ կապված դատական գործերին չի միջամտել:

Հատկանշական է, որ քննիչների կողմից ենթադրյալ կեղծիքներ կատարելու մասին «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ին և մարդու իրավունքների պաշտպանին հայտնած Փնջիկ Թերոյանը որևէ կերպ չի վիճարկել հիշյալ արձանագրություններում նշված տվյալները՝ զննության առարկաների բովանդակության իմաստով: Նա ցուցմունք է տվել, որ ծանոթ է այդ արձանագրություններին և դրանցում արտացոլված է զննության առարկա հանդիսացող ձայնագրությունների և հեռախոսազանգերի վերածանումների իրական բովանդակությունը: Նախաքննությամբ նույնպես հիմնավորվել է, որ քննիչների կողմից զննություն կատարելիս արտացոլվել է դրանց ճիշտ բովանդակությունը

Նախաքննության ընթացքում նշանակվել է դատաձեռագրաբանական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Լոռու մարզի քննչական բաժնի քննիչ Մ. Հարությունյանի կազմած «Լազերային սկավառակի ձայնագրառման զննություն կատարելու մասին» 22.11.2012թ. արձանագրության մեջ ընթերակաների ստորագրությունների համար նախատեսված հատվածներում՝ առաջին էջում 1 և 2 թվերի դիմաց, նույն էջի տակ, ինչպես նաև 2-րդ էջի վերջում՝ 1 և 2 թվերի դիմաց առկա ստորագրությունները կատարված չեն Մեր Հարությունյանի կողմից, այլ կատարված են այլ անձի կողմից (պարզել, թե դրանք կատարված են նույն, թե տարբեր անձանց կողմից, հնարավոր չի եղել): Ստորագրությունների դիմաց «Պետրոսյան» և «Բ.Կոբալյան» գրառումները հավանաբար կատարված չեն Մ. Հարությունյանի կողմից, այլ կատարված են այլ անձի (անձանց): Կատեգորիկ հետևություն հնարավոր չէ հանգել հետազոտվող գրառումների համառոտության, պարունակվող նույնանման տառերի սահմանափակ քանակության և գրաֆիկական նյութերի սակավության պատճառով:

ՀՀ ոստիկանության ԱՎՎ պետի գրության համաձայն՝ ՀՀ ոստիկանության ԱՎՎ անձնագրային համակարգի ավտոմատացված համալիրի և պետական ռեգիստրի պահոցներում «Գառնիկ Վլադիմիրի Պետրոսյան» և «Բորիս Հերմանի Կոբելյան» («Կոբալյան») անուն-հայրանուն-ազգանվամբ անձանց վերաբերյալ տեղեկություններ չկան:

Համաձայն ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաքաղի Տարոնի և Բազումի բաժնինների պետերի գրությունների՝ ձեռնարկված միջոցառումներով չի հաջողվել պարզել որպես ընթերակա ներգրավված անձանց ինքնությունը:

Այսպիսով՝ քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ Մեր Հարությունյանի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու հանգամանքը ստուգելու ուղղությամբ, սակայն այդ մասին վկայող բավարար և փոխկապակցված ապացույցներ ձեռք չեն բերվել, առկա տվյալներն էլ հիմք չեն տալիս նրա մեղավորության մասին հավաստի եզրահանգում անելու, իսկ լրացուցիչ ապացույցներ

հավաքելու բոլոր հնարավոր միջոցները սպառվել են: Բացի այդ՝ Մեր Հարությունյանի փաստարկներն այն մասին, որ քննչական գործողության ընթացքում իրոք ներգրավել է ընթարակաների, իսկ վերջիններս էլ, հավանաբար, իրենց վերաբերյալ կեղծ տվյալներ են հայտնել, նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով չեն փարատվել, ինչը ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն պետք է մեկնաբանվի հօգուտ Մեր Հարությունյանի:

Ինչ վերաբերում է մյուս քննիչին՝ Սասուն Մխիթարյանին, ապա նրա կողմից պաշտոնեական կեղծիք կամ քրեորեն հետապնդելի որևէ այլ արարք կատարելու վերաբերյալ նախաքննության ընթացքում տվայլներ ձեռք չեն բերվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 261-262-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Վարույթումս գտնվող թիվ 62226614 քրեական գործով Մեր Հարությունյանի և Սասուն Մխիթարյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նրանց արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների բացակայության պատճառով, և գործի վարույթը կարճել:

2. Որոշման օրինակն ուղարկել Արթուր Սաքունցին և Փնջիկ Թերոյանին և պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև այն ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը, կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Դատախազը բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու հետ կապված բողոքը մերժելու մասին դատախազի որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

3.Որոշման պատճենն ուղարկել քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության
հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ՝ Ա. Սինասյան